ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

«ՋՈԵԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի հուլիսի 18-ի №01/11.1/5333-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում հայտնաբերվել է 902.5-915.0ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում շահագործվող բջջային կապի վերահաղորդակ, որը տեղակայված է Երևան քաղաքի Հակոբ Հակոբյան փողոցի №2/102 հասցեում, որտեղ գործունեություն է իրականացնում «ՋՈԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն),

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հուլիսի 20-ի №ՍԾ/34.2-Մ2-9/2411-2022 գրությունը, որին ի պատասխան Ընկերությունը հայտնել է, որ բջջային կապի հասանելիության խնդրի լուծման նպատակով տեղադրվել է վերահաղորդակ, որը կապամոնտաժվի,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Ընկերության գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 902.5-915.0ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի

«ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 902.5-915.0ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2022թ.